# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N7.1

ք. Երևան 23. 02. 2016թ.

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն (հետագայում «Կատարող»), ի դեմս Գլխավոր տնօրեն Ա.Գասպարյանի, որը գործում է կանոնադրության համաձայն, մի կողմից և «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը (հետագայում «Պատվիրատու»), ի դեմս Աշխատակազմի ղեկավար Ս. Հակոբյանի, որը գործում է «ՀՀ ԿԱ ՔԱԳՎ աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության համաձայն, մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### *1.Պայմանագրի առարկան*

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը պարտավորվում է իր սեփականությունը հանդիսացող սույն պայմանագրի 1.2 կետում նշված բնութագրով տրանսպորտային միջոցներով մատուցել 1.3 կետում նշված ծառայությունները:

1.2 Տրանսպորտային միջոցների բնութագրերը՝

| № | Տրանսպորտային միջոցի մակնիշը և մոդելը | Նույնականացման համարը | Գույնը |
|---|---|---|---|
| 1. | Skoda Superb | TMBCC43T9D9038653 | սև մետալիկ |
| 2. | Skoda Superb | TMBCE8NP6G7057422 | սև |

1.3 Ծառայությունները մատուցվում են սույն պայմանագրի 1.2 կետում նշված տրանսպորտային միջոցներից որևիցե մեկով, Պատվիրատուի համար ըստ անհրաժեշտության՝ պաշտոնեական պատվիրակությունների դիմավորման և ճանապարհման, հատուկ չվերթների, ստուգայցների սպասարկումների և այլ նպատակներով:

1.4 Կողմերը սահմանեցին, որ սույն պայմանագրի գործողության ընթացքում Կատարողը չի զրկվում 1.2 կետում նշված տրանսպորտային միջոցները իր կարիքների համար օգտագործելու իրավունքից՝ չդադարեցնելով 1.3 կետում նշված ծառայությունների մատուցումը:

### *2.Ծառայությունների մատուցման ժամկետը*

2.1 Ծառայությունները մատուցվում են սույն պայմանագրի գործողության ողջ ժամկետում:

### *3.Վճարը և հաշվարկների կարգը*

3.1 Սույն պայմանագրի համաձայն մատուցված ծառայությունների արժեքը կազմում է տարեկան **900 000 (ինը հարյուր հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ամսվա համար մատուցված ծառայությունների պայմանագրային գինը կազմում է **75000 (յոթանասունհինգ հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Յուրաքանչյուր ամսվա դիմաց վճարը Պատվիրատուն Կատարողին է փոխանցում մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը:

3 2 Ծառայությունների մատուցման դիմաց վճարի չափը կարող է վերանայվել՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

### *4.Կողմերի պարտավորությունները*

***4.1 Կատարողը պարտավորվում է՝***

4.1.1 Կատարել ամսեկան 1500 կիլոմետր վազքի մասով տրանսպորտային միջոցի տեխնիկական սպասարկումը, որն իր մեջ է ներառում «Պրեմիում» վառելիքի տրամադրումը, ինչպես նաև ընթացիկ վերանորոգումը:

4.1.2 Ծառայությունների մատուցման ընթացքում ապահովել տրանսպորտային միջոցի անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը:

***4.2 Պատվիրատուն պարտավորվում է՝***

4.2.1 Ժամանակին կատարել մատուցված ծառայությունների դիմաց վճարումները:

### *5.Կողմերի պատասխանատվությունը*

5.1 Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

## 6. Սույն պայմանագրի դադարեցման հիմքերը

6.1 Պայմանագիրը կարող է վաղաժամկետ, միակողմանի լուծվել կողմերից մեկի նախաձեռնությամբ: Կողմը, որի նախաձեռնությամբ պետք է լուծվի պայմանագիրը, պարտավոր է պայմանագրի լուծման օրից առնավազն մեկ ամիս առաջ այդ մասին գրավոր տեղեկացնել մյուս կողմին:

## 7. Հատուկ պայմանները

7.1 Տրանսպորտային միջոցը վարելու իրավունք ունի Կատարողի հետ աշխատանքային հարաբերություններում գտնվող Հակոբ Ղազարյանը (Անձնագիր՝ № AH 0680483, տրված՝ 004-ի կողմից, 15.10.2008թ):

## 8. Այլ պայմաններ

8.1 Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են անմիջական բանակցությունների միջոցով: Նշված միջոցով վեճը չլուծվելու դեպքում այն պետք է կարգավորվի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.2 Կողմն իր իրավունքներն ու պարտականությունները իրավունք չունի փոխանցել երրորդ անձին (կամ անձանց)՝ առանց մյուս կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրով չկանոնակարգված հարաբերությունները կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

8.4 Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, հայերեն լեզվով, որոնցից մեկը մնում է Պատվիրատուի, իսկ մյուսը՝ Կատարողի մոտ:

8.5 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի հաստատման պահից և գործում մեկ տարի ժամկետով:

8.6 Սույն պայմանագրի գործողության ժամկետը համարվում է երկարաձգված յուրաքանչյուր հաջորդ մեկ տարով, եթե կողմերից որևէ մեկը գրավոր չի հայտնում պայմանագիրը դադարեցնելու մասին ցանկություն:

## 9.Կողմերի հասցեները և վավերապայմանները

| **Պատվիրատու** | **Կատարող** |
|---|---|
| «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ | «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ |
| Հայաստանի Հանրապետություն<br>375042, ք.Երևան,<br>«Զվարթնոց» օդանավակայան<br>ՀՎՀՀ: 01204231 | Հայաստանի Հանրապետություն<br>375042, ք.Երևան,<br>«Զվարթնոց» օդանավակայան<br>ՀՎՀՀ: 01216144 |
| Բանկ՝ Թիվ 1 Գանձապետական բաժանմունք<br><br>Հ.հ.: 900011207041 – ՀՀ դրամ | Բանկ՝ «Արդշինինվեսբանկ» «Զվարթնոց»-ի մասնաճյուղ<br>Հայաստանի Հանրապետություն, փ.Դեղատան 3, 375010 Երևան,<br>SWIFT CODE: ASHBAM 22<br>Հ.հ.: 247064200089 – ՀՀ դրամ |

***Աշխատակազմի ղեկավար***

**Ս. Հակոբյան**

ստորագրություն

Կ.Տ

***Գլխավոր տնօրեն***

**Ա.Գասպարյան**

ստորագրություն

Կ.Տ

# Համաձայնագիր №1

*(23.02.2016թ.-ին կնքված թիվ 7.1 պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ)*

ք. Երևան 24.01.17թ.

«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը (հետագայում «Պատվիրատու»), ի դեմս Աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Ա.Մանուկյանի, որը գործում է «ՀՀ ԿԱ ՔԱԳՎ աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության համաձայն, մի կողմից և «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության կանոնադրության հիման վրա գործող Գլխավոր տնօրեն՝ Ա. Գասպարյանի, մյուս կողմից, միասին՝ Կողմեր, կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Երկկողմանի համաձայնությամբ Կողմերի միջև 23.02.2016թ.-ին կնքված թիվ 7.1 պայմանագրի թիվ 7.1 կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7.1 Տրանսպորտային միջոցը վարելու իրավունք ունի Կատարողի հետ աշխատանքային հարաբերություններում գտնվող Միեր Պողոսյանը (Նույն. քարտ՝ № 001170091, տրված՝ 012-ի կողմից)»:

2. Երկկողմանի համաձայնությամբ Կողմերի միջև 23.02.2016թ.-ին կնքված թիվ 9 կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«***9.Կողմերի հասցեները և վավերապայմանները***

| **Պատվիրատու** | **Կատարող** |
|---|---|
| «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ | «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ |
| Հայաստանի Հանրապետություն<br>375042, ք.Երևան,<br>«Զվարթնոց» օդանավակայան<br>ՀՎՀՀ: 01204231 | Հայաստանի Հանրապետություն<br>375042, ք.Երևան,<br>«Զվարթնոց» օդանավակայան<br>ՀՎՀՀ: 01216144 |

| | |
|---|---|
| Բանկ՝ Թիվ 1 Գանձապետական բաժանմունք<br><br>Հ.հ.: 900011207082 – ՀՀ դրամ | Բանկ՝ «Արդշինինվեսբանկ»<br>«Զվարթնոց»-ի մասնաճյուղ<br>Հայաստանի Հանրապետություն,<br>փ.Դեղատան 3, 375010 Երևան,<br>SWIFT CODE: ASHBAM 22<br>Հ.հ.: 247064200089 – ՀՀ դրամ |

3. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի հաստատման պահից և հանդիսանում է 23.02.2016թ.-ին կնքված թիվ 7.1 պայմանագրի անբաժանելի մասը:

***Աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար***

Ա. Մանուկյան

ստորագրություն

Կ.Տ

***Գլխավոր տնօրեն***

Ա.Գասպարյան

ստորագրություն

Կ.Տ